# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

## ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2009թ. սեպտեմբերի 18-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 25-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ. Դավթյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

1. **Մրցույթ.**

1.1. **ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտի մեկ տեղի համար հայտարարված մրցույթի հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, դոցենտ Ս. Դիլբանդյանը հայտնեց, որ նշված տեղի համար դիմել է նույն ամիոնի դասախոս, իրավ. գիտ. թեկնածու Տաթևիկ Դավթյանը: Ելույթ ունեցողը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալների հետ, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

Ելույթ ունեցան նաև ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գ. Ղազինյանը, քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Տ. Բարսեղյանը, քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ Ս. Մեղրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտի պաշտոնում Տաթևիկ Դավթյանի ընտրության հարցը դնել փակ, գաղտնի քվեարկության: Այդ կապակցությամբ բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով. նախագահ՝ Ս. Մուրադյան. անդամներ՝ Ռ. Մելիքյան և Ա. Թավադյան (ՈւԽ նախագահ):

ԼՍԵՑԻՆ. Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա են եղել դրա 32 անդամներից 25-ը, որոնցից 25-ը մասնակցել են քվերակությանը:

Ըստ քվերակության արդյունքների Տաթևիկ Դավթյանի օգտին քվեարկել է խորհրդի 25 անդամ, դեմ չկա, անվավեր չկա:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի փակ, գաղտնի քվեարկության արդյունքները,

բ/ իրավ. գիտ. թեկնածու, դասախոս Տաթևիկ Դավթյանին համարել ընտրված քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտի պաշտոնում:

**2. Գիտական կոչումների շնորհում.**

2.1. **ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Գ. Բեքմեզյանին՝ դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ դոցենտ Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Գ. Բեքմեզյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Ս.Մեղրյանը, Ա.Գաբուզյանը, Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Գ. Բեքմեզյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

2.2. **ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Վահե Հովհաննիսյանին՝ դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ դոցենտ Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Վ. Հովհաննիսյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Ս.Մեղրյանը, Ա.Գաբուզյանը, Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Վ. Հովհաննիսյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

**3. ԼՍԵՑԻՆ. Ֆակուլտետի խորհրդի 2009-2010 ուսումնական տարվա աշխատանքային ծրագրի հաստատման հարցը՝ ցեկուցող խորհրդի գիտական քարտուղար ի.գ.թ. Տ. Դավթյան:**

Զեկուցողը ներկայացրեց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2009-2010 ուսումնական տարվա աշխատանքային ծրագիրը, առանձնացնելով դրանում ընդգրկված և ֆակուլտետի գործունեությանը վերաբերող առավել կարևոր հարցերն ու խնդիրները: Զեկուցողը նշեց, որ ի լրումն խորհրդի նախորդ տարիների աշխատանքային պլաններում ներառված հարցերի, 2009-2010 ուսումնական տարվա աշխատանքային պլանում ներառվել են նաև իրավաբանական կլինիկայի, կարիերայի կենտրոնի, էկոլոգիական իրավունքի կենտրոնի, ինչպես նաև եվրոպական իրավունքի կենտրոն տնօրենների հաղորդումները (հաշվետվությունները)՝ կատարված աշխատանքների վերաբերյալ: Տ. Դավթյանը նշեց նաև, որ աշխատանքային ծրագիրը վերջնականապես չի կանխորոշում խորհիդի կողմից քննարկվելիք հարցերի շրջանակը և ուսումնական տարվա ընթացքում խուրհուրդը կարող է ըստ անհրաժեշտության անդրադառնալ արդիական և հրատապ հարցերի, ինչպես դա եղել է նախորդ տարիներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Բարսեղյանը, Ա. Իսկոյանը, Ս. Մեղրյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2009-2010 ուսումնական տարվա աշխատանքային ծրագիրը (կցվում է):

4. **ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում 2009-2010 ուս. տարվա ընդունելության արդյունքների մասին հաղորդումը, ցեկուցող, դեկան Գ. Ղազինյան:**

Զեկուցողը ներկայացրեց, որ նախատեսված է եղել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ ընդունել 20 ուսանող պետ. պատվերի շրջանակներում և 90 ուսանող վճարովի ուսուցման համակարգով: Սակայն ընդունելության քննությունների արդյունքներով պետպատվերի շրջանակներում բացի վերը նշված 20 ուսանողից ևս 5-ը ընդունվել են արտոնություններով: Վճարովի համակարգով ընդունել է 125 ուսանող, 9 հոգի ընդունվել են ԱՊՀ-ից, 1-ը՝ ԼՂՀ-ից: Ներկայումս ֆակուլտետի 1-ին կուրսի երկու հոսքերում ընդհանուր առմամբ սովորում է 160 ուսանող:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Լ. Օհանյանը, Ն. Այվազյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում 2009-2010 ուս. տարվա ընդունելության արդյունքների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

**5. ԼՍԵՑԻՆ. 2009-2010 ուս. տարում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ ընդունված ասպիրանտների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը (զեկուցող՝ ամբիոնի վարիչներ):**

5.1. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը նույն ամբիոնի ասպիրանտ Լիպարիտ Դրմեյանի ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Բարսեղյանը, Ս. Մեղրյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա) հաստատել Լիպարիտ Դրմեյանի՝ «Համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության (ֆրանչայզինգի) պայմանագրի իրավական կարգավորումը ՀՀ օրենսդրությամբ» վերտառությամբ ատենախոսության թեման, բնագավառը՝ հումանիտար գիտություններ, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը (կոդը) ԺԲ.00.03. առարկաներ՝ քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք:

բ) Լիպարիտ Դրմեյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Գ. Բեքմեզյանին,

գ) միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի որոշումը:

5.2. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը նույն ամբիոնի հայցորդ Գոռ Մարգարյանի ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Բարսեղյանը, Ս. Մեղրյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա) հաստատել Գոռ Մարգարյանի՝ «Ակրեդիտիվների իրավական կարգավորումը մայրցամաքային և ընդհանուր իրավունքի երկրներում (տեսագործնական-համեմատական վերլուծություն)» վերտառությամբ ատենախոսության թեման, բնագավառը՝ հումանիտար գիտություններ, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը (կոդը) ԺԲ.00.03. առարկաներ՝ քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք:

բ) Գոռ Մարգարյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. դոկտոր Ա. Հայկյանցին,

գ) միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի որոշումը:

5.3. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը նույն ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Գոռ Մովսիսյանի ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Իսկոյանը, Տ. Բարսեղյանը, Ս. Մեղրյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա) հաստատել Գոռ Մովսիսյանի՝ «Բնական ռեսուրսների պետական կառավարման իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ատենախոսության թեման, բնագավառը՝ հումանիտար գիտություններ, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը (կոդը) ԺԲ-00.02, առարկաներ՝ սահմանադրական իրավունք, վարչական իրավունք, ֆինանսական իրավունք, մունիցիպալ իրավունք, բնապահպանական իրավունք, եվրոպական իրավունք, պետական կառավարում :

բ) Գոռ Մովսիսյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա. Իսկոյանին,

գ) միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի որոշումը:

5.4. ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ Բագրատ Վաչագանի Ղազինյանի ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ռ. Եղյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ Բագրատ Վաչագանի Ղազինյանի «Գործադիր իշխանության սահմանադրաիրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում»

վերտառությամբ ատենախոսության թեման, բնագավառը՝ հումանիտար գիտություններ, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը (կոդը) ԺԲ-00.02, առարկաներ՝ Հանրային իրավունք - սահմանադրական իրավունք, վարչական իրավունք, ֆինանսական իրավունք, մունիցիպալ իրավունք, բնապահպանական իրավունք, եվրոպական իրավունք, պետական կառավարում:

բ) Բագրատ Ղազինյանի գիտական ղեկավար նշանակել իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Հարությունյանին,

գ) միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի որոշումը:

6. **ԼՍԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ Հ. Խաչիկյանի «ՀՀ քրեակատարողական իրավունք» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս.Դիլբանդյանը, Տ.Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Ա. Մարգարյանը, Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ գիտական մակարդակով և ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն, Հ. Խաչիկյանի «ՀՀ քրեակատարողական իրավունք» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

7. ԼՍԵՑԻՆ. 2009-2010 ուս. տարվա համար անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Հ. Խաչիկյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը, իրավագիտության ֆակուլտետի խորհուրդը որպես անվանական կրթաթոշակի թեկնածուներ երաշխավորում է հետևյալ ուսանողներին.

1. Շուշանիկ Նազարյան (մագիստրատուրա 1-ին տարի)՝ Գրիգոր Զոհրապի անվան կրթաթոշակ,
2. Անահիտ Մանասյան (մագիստրատուրա 2-րդ տարի)՝ Մխիթար Գոշի անվան կրթաթոշակ:
3. Տաթևիկ Սուջյան (4-րդ կուրս) ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի սահմանած Վ. Ներսեսյանցի անվանական կրթաթոշակ :

| | |
|---|---|
| ***Խորհրդի նախագահ*** | ***Գ. Ղազինյան*** |
| ***Խորհրդի քարտուղար*** | ***Տ. Դավթյան*** |

**ՔԱՂՎԱԾՔ**
**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի**
**2009թ. սեպտեմբերի 18-ի նիստի թիվ 1 արձանագրությունից**

**ԼՍԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ Հ. Խաչիկյանի «ՀՀ քրեակատարողական իրավունք» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս.Դիլբանդյանը, Տ.Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Ա. Մարգարյանը, Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ գիտական մակարդակով և ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն, Հ. Խաչիկյանի «ՀՀ քրեակատարողական իրավունք» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

*Խորհրդի նախագահ* *Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*

*Իսկականի հետ ճիշտ է*
*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*

**ՔԱՂՎԱԾՔ**
**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի**

2009թ. սեպտեմբերի 18-ի նիստի թիվ 1 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Գ. Բեքմեզյանին` դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ դոցենտ Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Գ. Բեքմեզյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Ս.Մեղրյանը, Ա.Գաբուզյանը, Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին` քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Գ. Բեքմեզյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

*Խորհրդի նախագահ* *Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*

*Իսկականի հետ ճիշտ է*
*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*

**ՔԱՂՎԱԾՔ**
**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի**
**2009թ. սեպտեմբերի 18-ի նիստի թիվ 1 արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Վահե Հովհաննիսյանին՝ դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ դոցենտ Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Վ. Հովհաննիսյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Ս.Մեղրյանը, Ա.Գաբուզյանը, Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Վ. Հովհաննիսյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

| | |
|---|---|
| *Խորհրդի նախագահ* | *Գ. Ղազինյան* |
| *Խորհրդի քարտուղար* | *Տ. Դավթյան* |

*Իսկականի հետ ճիշտ է*
*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*

**ՔԱՂՎԱԾՔ**
**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի**
**2009թ. սեպտեմբերի 18-ի նիստի թիվ 1 արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ Բագրատ Վաչագանի Ղազինյանի ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ռ. Եղյանը, Ս. Մուրադյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ Բագրատ Վաչագանի Ղազինյանի «Գործադիր իշխանության սահմանադրաիրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ատենախոսության թեման, բնագավառը՝ հումանիտար գիտություններ, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը (կոդը) ԺԲ-00.02, առարկաներ՝ Հանրային իրավունք - սահմանադրական իրավունք, վարչական իրավունք, ֆինանսական իրավունք, մունիցիպալ իրավունք, բնապահպանական իրավունք, եվրոպական իրավունք, պետական կառավարում:

բ) Բագրատ Ղազինյանի գիտական ղեկավար նշանակել իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Հարությունյանին,

գ) միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի որոշումը:

**ՔԱՂՎԱԾՔ**
**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի**
**2009թ. սեպտեմբերի 18-ի նիստի թիվ 1 արձանագրությունից**

**ԼՍԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ Հ. Խաչիկյանի «ՀՀ քրեակատարողական իրավունք» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս.Դիլբանդյանը, Տ.Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Ա. Մարգարյանը, Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ գիտական մակարդակով և ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն, Հ. Խաչիկյանի «ՀՀ քրեակատարողական իրավունք» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

| | |
|---|---|
| *Խորհրդի նախագահ* | *Գ. Ղազինյան* |
| *Խորհրդի քարտուղար* | *Տ. Դավթյան* |

*Իսկականի հետ ճիշտ է*
*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*

**ՔԱՂՎԱԾՔ**

**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի**

**2009թ. սեպտեմբերի 18-ի նիստի թիվ 1 արձանագրությունից**

**ԼՍԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ Հ. Խաչիկյանի «ՀՀ քրեակատարողական իրավունք» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս.Դիլբանդյանը, Տ.Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Ա. Մարգարյանը, Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ գիտական մակարդակով և ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն, Հ. Խաչիկյանի «ՀՀ քրեակատարողական իրավունք» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

| | |
|---|---|
| *Խորհրդի նախագահ* | *Գ. Ղազինյան* |
| *Խորհրդի քարտուղար* | *Տ. Դավթյան* |

*Իսկականի հետ ճիշտ է*
*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*